

**ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 10.09.2025 թ. կայացած նիստի թիվ 1 արձանագրություն**

Օրակարգ

1. 2024-2025 ուսումնական տարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ ամբիոնի վարիչի հաշվետվություն (թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ՝ Ռ. Ղազարյան):
2. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
3. Ֆակուլտետի գիտխորհրդի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատում:
4. Հայցորդների և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
4. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի թիվ 1 նիստին 36 անդամներից ներկա էին 28-ը: Ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2024-2025 ուստարում ամբիոնների կատարած աշխատանքների վերաբերյալ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը:

ԼՍԵՅԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ. Ղազարյանի՝ 2024-2025 ուսումնական տարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ՝

Թարգմանության և տեսության ամբիոնի վարիչ Ռ. Ղազարյանը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարում ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվությունը՝ նշելով, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը ծավալել է ուսումնական և գիտական ակտիվ գործունեություն: Լույս են տեսել «Translation Studies: Theory and Practice» միջազգային գիտական պարբերականի 7-րդ, 8-րդ և 9-րդ հերթական համարները: 2025 թ. ապրիլին ամսագիրը ինդեքսավորվել է Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում:

ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոսական կազմը իրականացրել է ուսումնական և գիտական բազմաբովանդակ գործունեություն՝ պատրաստելով ոչ միայն որակյալ թարգմանիչներ, այլ նաև հրատարակելով ուսումնական ձեռնարկներ, գեղարվեստական թարգմանություններ, մենագրություններ և հոդվածների ժողովածուներ:

2024-2025 ուստարում ամբիոնը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Գործընկերության համաձայնագիր է կնքվել Երևանի պետական համալսարանի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի և Սիենայի օտարերկրացիների համալսարանի թարգմանաբանության կենտրոնի միջև, որը կրում է միջհամալսարանական բնույթ, քանի որ վերջինս ստորագրվել է երկու համալսարանների ռեկտորների կողմից: Համաձայնագրի շրջանակում նախատեսվում են գիտատեսմանական մի շարք ծրագրեր:

Ամբիոնի և ՀՀ Արդարադատության նախարարության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակում 2024 թ. նոյեմբերին հերթական անգամ անցկացվել է նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգում 10 լեզվով, որին մասնակցել է 150-ից ավել ղիմորդ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Այնուհետև դեկանն անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ՝

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց ընթացիկ ուսումնական տարվա **առաջին** կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

1. **Թամրազյան Տաթևիկ Հակոբի** - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի (Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ):

2. **Պողոսյան Անի Կամոյի** - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի (Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ):

3. **Ավետիսյան Ժասմին Աշոտի** - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն, ֆրանսերեն և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի (Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ):

Քննարկվեց նաև օրակարգի երրորդ հարցը՝ ֆակուլտետի գիտիտորհրդի 2025-2026 ուստարվա աշխատանքային պլանի հաստատումը: Միաձայն քվեարկության արդյունքում հաստատվեց ԵԼՀ ֆակուլտետի աշխատանքային պլանը:

Օրակարգի չորրորդ հարցի՝ հայցորդների և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման շրջանակում:

ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Արփինե Սարգսի Առաքելյանի** ատեստավորման հարցը (թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Ծիծաղաշարժ չափազանցության ճանաչողական արժեքը Պ.Գ. Վուդհաուսի ստեղծագործություններում», գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սեդա Զերորի Գասպարյան, մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Արփինե Առաքելյանը ներկայացրեց «Ծիծաղաշարժ չափազանցության ճանաչողական արժեքը Պ.Գ. Վուդհաուսի ստեղծագործություններում» թեմայի հիմնավորումը, արդիականությունը, հետազոտության նպատակը և մեթոդաբանությունը: Ուսումնասիրության առանցքում են Պ.Գ. Վուդհաուսի երեք ստեղծագործությունները՝ «Jeeves and the Feudal Spirit», «The Inimitable Jeeves», «The Code of the Woosters»: Տեքստի վերլուծության մեթոդի կիրառման արդյունքում առանձնացվել են չափազանցության դրսևորումները և վերջիններիս փոխներթափանցված կիրառությունը այլ հումորային լեզվաոճական հնարների՝ զուգահեռ (կրկնություն, համեմատություն և բառախաղ): Կրթական բաղադրիչի շրջանակում Արփինե Առաքելյանը մասնակցել է կրեդիտային դասընթացների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արփինե Առաքելյանին:

ԼՍԵՑԻՆ՝

Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ **Լուսինե Ջավիկի Զանինյանի** ատեստավորման հարցը (թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Սև հումորի դրսևորումը Ֆիլիպ Ռոթի ստեղծագործություններում («Մեռնող կենդանին» վեպում)» գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Անուշ Ռոստոմի Սեդրակյան, մասնագիտություն՝ Ժ.01.07 Արտասահմանյան գրականություն):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Նշվեց, որ Լուսինե Զանինյանը հաշվետու ուսումնական տարում ուսումնասիրել է «սև հումորի» դպրոցի ներկայացուցիչներին, նրանց ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները,

համեմատականներ ու զուգահեռներ անցկացնել Ֆիլիպ Ռոթի մյուս ստեղծագործությունների հետ՝ վերհանելով ստեղծագործական ոճի նմանություններն ու տարբերությունները: Հայցորդը տպագրել է մեկ գիտական հոդված «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական պարբերականում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Լուսինե Հովիկի Ջանինյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝

Արտասահմանյան գրականության ամբիոնի **Սիլվա Մարտինի Սուքիասյանի** ատեստավորման հարցը (թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Թոմաս Հարդիի «բնավորության և բնաշխարհի» վեպերը նատուրալիզմի և գենդերային խնդիրների տեսանկյունից», գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Արա Հրաչիկի Առաքելյան, մասնագիտություն՝ Ժ.01.07 Արտասահմանյան գրականություն):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Նշվեց, որ Սիլվա Սուքիասյանն ուսումնասիրել է գենդերային խնդիրների վերաբերյալ մի շարք հետազոտություններ, կազմել հետազոտության աշխատանքային պլանը, ինչպես նաև նշյալ խնդիրների հաշվառման դիտանկյունից վերլուծել հետազոտության առարկա ստեղծագործությունը: Հայցորդը մասնակցել է նաև կրեդիտային մի շարք դասընթացների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Սիլվա Մարտինի Սուքիասյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Մարինե Ալբերտի Էվոյանի** ատեստավորման հարցը՝ (թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Միջանկյալ կառույցները՝ որպես անգլերեն դիսկուրսի ձևավորման միջոց», գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Աստղիկ Էդվարդի Չուբարյան, մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հաշվետու ժամանակահատվածում քննվել և վերլուծության են ենթարկվել ատենախոսության համար տեսական հիմք հանդիսացող մի շարք մասնագիտական ուսումնասիրություններ, գիտական հոդվածներ ու

գիտահետազոտական աշխատանքներ: Աշխատանքի փաստական նյութը գիտական և գեղարվեստական անգլերեն դիսկուրսի լեզվական նմուշներ են: Տեսական և գործնական նյութերի հավաքագրման և վերլուծության արդյունքում հրապարակման է ներկայացվել «If շաղկապավոր ներդրյալ կառույցների շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական բնութագիրը գեղարվեստական երկխոսությունում» խորագրով գիտական հոդվածը, որը լույս կտեսնի Երևանի պետական համալսարանի «Անգլիական հետազոտությունների հայկական հանդես» գիտական ամսագրում: Եվս մեկ հոդված՝ «Ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունների՝ որպես միջանկյալ կառույցների խոսույթային-գործաբանական գործառույթները», հանձնվել է տպագրության «Սանկտ Պետերբուրգի համալսարանի տեղեկագիր. լեզու և գրականություն» պարբերականում: «Էպիստեմիկ միջանկյալ կառույցները՝ որպես թերասության գործիքներ արարողակարգային ելույթներում», խմբագրման փուլում է: Հայցորդը մասնակցել է նաև կրեդիտային մի շարք դասընթացների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Մարինե Ալբերտի Էվոյանին:

ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Անի Արամի Պետրոսյանի** ատեստավորման հարցը՝ (թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Անջատական հարցերի լեզվագործաբանական բնութագիրը (միջմշակութային հայեցակերպ)», գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Աստղիկ Էդվարդի Զուբարյան, մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հաշվետու ուսումնական տարում շարունակվել են վերլուծության ենթարկվել ատենախոսության համար տեսական հիմք հանդիսացող մի շարք մասնագիտական ուսումնասիրություններ: Մշակվել են հետազոտության մեթոդաբանական հիմքերը՝ համադրելով որակական և քանակական վերլուծության մեթոդները: Կատարվել է նախնական համեմատական վերլուծություն անգլերենի, հայերենի, ֆրանսերենի և ռուսերենի միջև՝ անջատական հարցերի կառուցվածքային, գործառական, գործաբանական առանձնահատկությունների տեսանկյունից: Փաստական նյութի և կորպուսային տվյալների հավաքագրումն ավարտված է, ձևակերպված է աշխատանքի տեսական հիմքը: Նշվեց, որ հետազոտության առաջին գլուխը «Անջատական հարցերի ուսումնասիրության տեսական հիմքերը լեզվաբանությունում» պատրաստ է: Նշված բաժնում ներկայացված են անջատական հարցերի սահմանումը և լեզվական առանձնահատկությունները, անջատական հարցերը որպես լեզվագործաբանական միավորներ, վերլուծվել է

անջատական հարցերի գործառույթը հաղորդակցման մեջ՝ ներառելով օրինակներ և համեմատական դիտարկումներ տարբեր լեզուներից (անգլերեն, հայերեն, ֆրանսերեն և ռուսերեն): Տպագրության է ներկայացվել մեկ հոդված, վերնագրված՝ **«A Pragmatic Analysis of the Structural Features of Tag Questions»**: Աշխատանքի հետագա ուսումնասիրության մեջ կներկայացվի տվյալների խորքային վերլուծություն՝ տարբեր մշակույթների հաղորդակցական նրբերանգների բացահայտման նպատակով: Հայցորդը մասնակցել է նաև կրեդիտային մի շարք դասընթացների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Անի Արամի Պետրոսյանին:

ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Արինա Արմենի Պարոնյանի** ատեստավորման հարցը՝ (թեկնածուական ատենախոսության թեմա՝ «Persuasion and Power in Business Communication», գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Քրիստինե Մուրադի Հարությունյան, մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Հաշվետու ուսումնական տարում վերլուծվել է բիզնես հաղորդակցությանն առնչվող գիտական գրականություն, ինչպես նաև իրականացվել է փաստական լեզվանյութի վերլուծություն: Տպագրության է պատրաստվում մեկ գիտական հոդված՝ գիտական ղեկավարի հետ համահեղինակությամբ, որը բովանդակում է հետազոտության հիմնական առանցքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Արինա Պարոնյանին:

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Գ. Դավալյան

10.09.2025 թ.